

ՈՐՈՇՈՒՄ

28.08.2018թ.

Արձանագրություն թիվ 1

1. ՀԱԱՀ Տնտեսագիտական և Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետների միավորման հարցի վերաբերյալ.

1.1. ՀԱԱՀ Տնտեսագիտական և Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետների վերամիավորման ու Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետ ձևավորելու հարցը քննարկել ՀԱԱՀ գիտական խորհրդում և դիմել ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդին՝ հաստատելու որոշումը:

1.2. Առաջարկել ՀԱԱՀ գիտխորհրդին Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի կազմում հաստատել հետևյալ ամբիոնները.

- Ագրոբիզնեսի կառավարման,
- Տվյալագիտության՝ միավորելով Ինֆորմատիկայի և մաթեմատիկական մեթոդների և Վիճակագրության և բիոմետրիայի ամբիոնները,
- Ֆինանսների և հաշվապահության՝ միավորելով Հաշվապահական հաշվառման և աուդիտի և Ֆինանսներ և վարկի ամբիոնները,
- Ագրարային էկոնոմիկայի՝ միավորելով Ագրոպարենային համակարգի էկոնոմիկայի, Տնտեսագիտության տեսության, Ապրանքագիտության և մարքեթինգի ամբիոնները,
- Ագրարային քաղաքականության և խորհրդատվության,
- Հասարակական գիտությունների՝ միավորելով Հայոց պատմության և փիլիսոփայության, իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնները:

2. ՀԱԱՀ Գյուղատնտեսության մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի և Հիդրոմեխորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետների միավորման հարցով.

2.1. Ստեղծել Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետ՝ միավորելով Գյուղատնտեսության մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի և Հիդրոմեխորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետները:

2.2. Հանձնարարել դեկաններին քննարկել ամբիոնների վերակազմավորման ու միավորման հարցը և մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնել առաջարկություններ:

3. ՀԱԱՀ որոշ ամբիոնների միավորման հարցի վերաբերյալ.

3.1. Միավորել Ագրոնոմիական ֆակուլտետի Ագրոէկոլոգիայի և Անտառագիտության ամբիոնները՝ ստեղծելով Անտառագիտության և ագրոէկոլոգիայի ամբիոն:

3.2. Միավորել Ագրոնոմիական ֆակուլտետի Հայոց և ռուսաց լեզուների ամբիոնը օտար լեզուների ամբիոնի հետ՝ ստեղծելով Հայոց և օտար լեզուների ամբիոն:

3.3. Միավորել Հայոց պատմության և փիլիսոփայության, Իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնները՝ ստեղծելով Հասարակական գիտությունների ամբիոն նորաստեղծ Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի կազմում:

3.4. Պարենամթերքի տեխնոլոգիայի ֆակուլտետում Մենդի արդյունաբերության սարքավորումների, կաշվի և մորթու տեխնոլոգիայի ամբիոնը անվանակոչել Մենդի արդյունաբերության սարքավորումների ամբիոն, իսկ կաշվի և մորթու տեխնոլոգիայի առարկաները տեղափոխել Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոն:

3.5. Երաշխավորել նշված առաջարկությունները ՀԱԱՀ գիտական խորհրդում քննարկելու և հաստատելու համար:

4. Ակադեմիական պարտքերի մարման գործընթացի վերաբերյալ.

4.1. Հանձնարարել ՀԱԱՀ բոլոր ֆակուլտետների դեկաններին սահմանված ժամկետում և սահմանված կարգով կազմակերպել ակադեմիական պարտքերի մարման գործընթացը:

5. ՀԱԱՀ քոլեջներում ընդունելության վիճակի վերաբերյալ.

5.1. Դիմել ՀՀ ԿԳ նախարարությանը՝ ՀԱԱՀ մասնաճյուղերի քոլեջների թափուր մնացած տեղերի տեղափոխման հարցով:

6. ՀԱԱՀ քոլեջներում դասավանդող դասախոսական կազմի պատշաճ ընտրության վերաբերյալ.

6.1. ՀԱԱՀ քոլեջներում դասավանդող դասախոսների ընտրությունը կատարել ամբիոնի վարիչների հետ համատեղ քննարկման արդյունքում՝ հիմք ընդունելով նաև ուսանողների կողմից դասախոսների գնահատման արդյունքները (պատասխանատուներ՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ.Մակարյան, Ա. Քոչինյանի անվ. գյուղատնտեսական քոլեջի տնօրեն Ա.Հովհաննիսյան):

7. ՀԱԱՀ քոլեջներում բուժկետի և բուֆետի անհրաժեշտության մասին.

7.1. Հանձնարարել վարչատնտեսական դեպարտամենտի պետ-պրոռեկտորի պաշտոնակատար Պ. Էֆենդյանին քննարկել և ներկայացնել ՀԱԱՀ-ում, ինչպես